ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 73

ք. Երևան **06.04.2021թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի»անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 01/14.3/5083-2021, ՀՀ շրջակա միջավայրի 2/02.5/3190-2021, ՀՀ էկոնոմիկայի 01/3405-2021 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/2757-2021 և Կադաստրի կոմիտեի ԴՍ/1657-2021 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Տեղ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից **0.105 հա** արոտավայր (կադաստրային ծածկագիր՝ 09-101-0124-0046-ից) փոխադրել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Մ. Մկրտչյան